Հավելված N 3
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Կապանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայությունների/Հանգստի գոտիներ/** ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-22/10 ծածկագրով գնման պայմանագրում 2023 թվականի նոյեմբերի 1-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1 պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված աշխատանքների չկատարում

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում, համաձայնագրի կնքում

Փոփոխության հիմնավորում Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, Կնքված պայմանագիր

Պատվիրատու՝ Կապանի համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ/Հանգստի գոտիներ/
«27» սեպտեմբեր 2022թ. կնքված N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԽԾՁԲ-22/10
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Կապան « 01 » նոյեմբեր 2023թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԵՎԱՌ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռոման Հարությունյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հաշվի առնելով կողմի առաջարկությունը, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ մասը և համաձայն պայմանագրի 7.5 կետի, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն Համաձայնագրի առարկա է հանդիսանում պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետի փոփոխությունը:
1.2.Ծառայությունների մատուցման վերջնաժամկետ է հանդիսանում 2023թ. դեկտեմբերի 1-ը:
1.3.Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույցը /Հավելված 1/՝ համաձայն սույն Համաձայնագրի փոփոխության:
1.4.Պայմանագրի Վճարման ժամանակացույցը/Հավելված 3/՝ համաձայն սույն Համաձայնագրի փոփոխության:
1.5.Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Կապանի համայնքապետարան	<<ՀԵՎԱՌ>> ՍՊԸ
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Մ. Պապյան 22/17
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<Արդշինբանկ>> ՓԲԸ Կապան մասնաճյուղ
ՀՀ 900312450050 համայնք 45%	ՀՀ 2470804033520000
ՀՀ 900312000582 սուբվենցիա 55%	ՀՎՀՀ 09421326
ՀՎՀՀ 09426088	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.